ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie — مجموعهٔ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Գ. ՊՈԼԱԴ

Գ. ՇՐՋԱՆ — ԹԻՒ 67 — 1899 ՅՈՒԼԻՍ 17

H. Polad, Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,,
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Turquie Constantinople

درعلیه‌ده بغچه قپوسنده اسکی ضبطیه‌ده
۱۹ نومرولی دکانده (حانراقیداك) «مجموعهٔ علوم»
غزته‌سی سرمحرری (پولاد) افندی‌یه

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գ. Բոլոտ.—Մշակական.—Հողին տակը հողին վրայ։
Մէհրան Յովհաննէսեան.—Մատենախօսական։ Մանր Ուսում։
Մինաս.—Ազգային.—Տիար Մատթէոս Մամուրեան և իւր Յուբէլեան։
Կիւրղ.—Գրախօսական։—Տէր. Տաղուաքեանի գրքին առթիւ։
Ա. Յ. Ալէվեան. — Հայ Հռովմէականաց Կ. Պատրիարքական ընտրութիւնը։
Գ. Տ. Մէսրոպեան.—Մեղուաբուծական։
Գ. Բոլոտ.—Շերամաբուծական։
Թղթակցութիւն, Ազդ. եւայլն.

Թուրքիոյ համար	տարեկան	50	ղրշ.
» »	վեցամսեայ	26	»
» »	եռամսեայ	13	»
Արտասահման	տարեկան	15	ֆրանք
	կամ	6	ռուբլի

Հատը 40 փարայ

Դրամի տեղ կ'ընդունուի նամակի դրոշմաթուղթ, 50 հատ 1 ղրշ.նոց դրոշմաթուղթ՝ 50 ղրշ.ի փոխարէն։

Տպագր. Գ. ԳԱՑՍԷՐԵԱՆ
Կ. Գալաթա, Պապ-Ալի ճատտէսի. թիւ 4

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

—o—

ՄԱՆԻՍԱ.— Գեղամ էֆ. Ունճեան.— Ստացած ենք գրութիւնները, կը հրատարակուի։

ՊԼՈՒԶ.—Նոյնպէս։

ԲԷՕԹԱՀԵԱ.—Մ. Զիլինկիրեան էֆ., տեսուչ Պետական անտառներու.—Շնորհակալութեամբ ստացանք Ճիվան էֆ.ի ձեռքով, 85 ղրշ., ձեր յանձնարարութիւնք փութով կը կատարուին։

ԻԶՄԻՏ.—Լեւոն էֆ. Մ. Թէրզեան.— Ձեր նամակին կը պատասխանուի, կը գովենք և ձեր արհեստասիրական եռանդը։

ՎԵՆԵՏԻԿ. — Տեսչութիւն Մխիթարեանց տպագրութեան. — Քիչ օրէն գրամ պիտի ղրկուի ձեզ։

ՎԵՆԵՏԻԿ. — Վեր. Հ. Ս. Երամեան.— Շնորհակալութիւն. կը փութանք քիչ ատենէն ղրկել ձեր ուզած լուսանկարը։

ԻԶՄԻՏ. — Գործակալ.—Ձեր յանձնարարութիւնները նկատողութեան առնուելով, պատչաճը կը տնօրինուի։

ՄԱԼԿԱՐԱ.—Գործակալ.—Տիար Լ. Թարքաճեան խմբագրատունս հրաւիրուելով, յայտնեց թէ՝ երբէք իրեն եկած չէ Ձեր կողմէ և ոչ մէկ գրութիւն, դամ 181 դահեկան վճարելու յանձնարարութիւն։ Խնդրենք, Տիար Լարեկամ, սա աշկապուկի խաղէն մեզ փրկէ, և Ձեր ուղղամտութեան և լաւաբարոյութեան վրայ հաստատած մեր լիահաւատ վստահութիւնը ջանա՝ լոպպէ մը առաջ բարեւոք գործածել, և պայն բնաւ չի խախտել։

ՍԻԼԻՎՐԻ.—Գործակալ.—Ձեր յօդուածները ստացած ենք։

ԱՑՏԸՆ.—Առ Տիար Անդրանիկ Վարժապետեան։—Մէկուկէս տարուան մէջ, առաջին-վերջին նամակդ է պատուալիր ու հաւատարմալիր զոր ընկալայ։ Նամակ չառած տեղէդ մի՛ շարժիր։ Սրտագին սիրոյ ու կարոտոյ բարեւներս.

ՍԵԲԱՍՏԻԱ.—Առ բարձրաշնորհ Արքեպիսկոպոս Առաջնորդն, Տ. Տ. Պետրոս եպիսկոպոս Թահմիզեան.—

Պոլսոյ և գաւառի աշխարհական թէ կրօնական Հայոց ողջամիտ մասերէն ազգու և ստիպիչ խնդրարկու հանրագրեր հասած են խմբագրութեանս, որ հաճիք անմնեկաղ ու վճռաբար վարդապետ ձեռնադրել կը-Յարութիւն Կամսարական Սեբաստաւանել, էջ վայելէ նաև մեր Մի կանուխ կը-թիւնը ու աջակցութիւն։ Հառաւ պէտք սար, Սարկաւագ, Պոլսոյ և Գաւառ մը քարոզիչներն արդէն կ'արժէ ու կ'ընդունի իւր բնածիր պերճախօսութեամբն ու լրջնասէր խմաստուն խանդավառութեամբը։

ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Առ Տ. Տ. բողոքարկուս,—Ընդունած ենք ոչ միայն Իզնիմիտի քաղաքացւոց ջախջախիչ մեծամասնութեան, այլ նաև Նիկոմիդիոյ 30-40 մէն մի թեմերէն նամակները, հանրագրերը, որ արդար զայրութով և իրենց գատն ու իրաւունքը՝ իրև անձնական արժանապատուութեան խնդիր, ց'վերջին շունչ, «գութ գը գութ» ընկրկուն յարատեւելու բուռն շեշտերով, կ'բողոքեն Առաջնորդի խնդիր յարուցանելը պատրուակ բռնելով՝ Նիկոմիդիոյ գաւառին Հայոց մրցքերը չփութել, և ժողովուրդը ընդունայն խռովել ուզող կարգ մը հակառաջնորդեան յայանի թէ գաղտնի էնթրիկներուն, և նոյն իսկ Պոլսոյ լրագրաց վստահութիւնը չարաչար գործածող իսել մը անխելք, շահախնդիր, քինախնդիր ու մարդելոյզ թղթակցաց ու անոնց ստիպաստուտ լուրեր տուն տուղ ծակամուտ վրդովարարներու դէմ։ Մենք իրև խաղաղասիրութեան և իրաւախոհութեան սկզբունապաշտ, առ այժմ զանց կ'ընենք այդ բողոքարկու թղթակցութեանց ու հանրագրերու հրատարակումը. գիտնալով որ այդ կուսակցութեան հովն ալ պիտի անցնի. այսօր անհասկցողութեամբ մը զիրար ատող թեմականները՝ օր մը իրարու հետ պիտի պատուին հաշտութեան շրթունքով, և ժողովուրդը պառակտողները իրև խռովարար երկու կուսակցութեանց երեսէն ալ իյնալով՝ պիտի խայտառակուին ու բացը պիտի մնան, ինչպէս եղած է միշտ, ազգային ամէն կեդրոնավայրերու մէջ։ Իսկ Իզնիմիտի և թեմերէից առաջնորդեան կուսակցութեանց այն երբեմն առ սէր խոհեմութեան՝ լռութիւնն ու պարկեշտութիւնը նախամեծար համարող՝ այլ սակայն վերջին օրերս, լրագրաց մէջ՝ իրենց նկատմամբ հրատարակուած անձնական

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Դ. ՐՈՒԱՏ

Գ. ՇՐՋԱՆ | ԹԻՒ 67 | 1899 ՅՈՒԼԻՍ 17

ՄՇԱԿԱԿԱՆ

ՀՈՂԻՆ ՏԱԿԸ, ՀՈՂԻՆ ՎՐԱՅ

Ա. Հ. ՊԷԿԵԱՆ ԷՖ.

Գիտեմ թէ՝ «Հանրագիտակ»ը ընթերցողներէ ոմանք, երբ անոր էջերուն մէջ կը հանդիպին ընդհանրապէս երկրագործին ուղղուած խրատներու կամ խորհուրդներու, չեն յահագրգռիր այնչափ. գիտեմ նաեւ թէ, ամենամէ ո՛չ ոք մտադիր է թողուլ քաղքենի կեանքը, հողագործին տրեխը ոտքը քաշել, այրող արեւին տակ՝ ա՛րտը վազել, ու արօրին մա՛ճը բռնելով՝ հողի կոյտեր թաւալել։ Անմարդաբնակ տարածութեան մէջ, ո՛րչափ ալ բնութիւնը վսեմացած ըլլայ իր գերմարդկային արուեստով, Եդեմական լռութեան մէջ, ո՛րչափ ալ գեղազուարճ ու ծիծաղկոտ ըլլայ բնութիւնը՝ իր ոսկեճամուկ հասկերով, երինեերանգ ծաղիկներով, սաղարթախիտ ծառերով, ու պերճախօս դայլայլիկներով, ճուղուղումներով, կը հրապուրուիք անոր բանաստեղծութիւնով, կ'ուքանչանաք անոր վեհաշուք մեծութեան վրայ, բայց հեռի հեռի կը փախիք անոր գործնական կիրարկութիւններէն։ Սակայն գիտեմ թէ՝ Ձեզմէ շատեր կը փափաքին փոքրիկ պարտէզ մ'ունենալ, մշակել այդ ափ մը հողը, և անոր մէջ վայելել բնութիւնը՝ իր անհուն ուքանչանքներով։ Ո՞վ չը սիրեր արդէն՝ հո՛ս ծաղիկ մը տնկել, հո՛ն դեղձ մը հասցնել, և իր ձեռքերով խակ մշակած ու խնամած աղցանը, լուբիան, կամ սմբուկն ու լոլիկը հաճոյքով քաղել, ու երթալ իր խոնջանքը առնել՝ յասմիկի կամ որթի սարփինային տակ տարածուած շուքին մէջ, կեա՛նք ծծել ու ապրիլ՝ կենդանի վարդերու, կոյս շուշաններու հեշտաբոյր մթնոլորտին մէջ։ Ո՜հ, ա՛յս բնական է, ա՛յս է որ մարդուս գոյութեան մէջէն չի խլուիր, որչափ քաղաքակիրթ, որչափ ալ վայրենի ըլլայ անիկա։

Մարդս ծնած օրէն, արդէն հողին կապուած է։ Աստուած՝ առաջին մարդը դրախտին մէջ ստեղծեց, որ հոգով մարմնով անոր կապուի. մարդը ստեղծեց՝ դրախտը մշակելու համար, դրախտը ստեղծեց. մարդուն կեանք ու հաճոյք տալու համար. և այդ օ-

րէն, մարդուս ժառանգ մնացած է սիրել հողը՝ սիրել անոր արտադրութիւնները։ Նախադարեան մարդը երկրագործ էր միայն, չունէր ուրիշ արհեստ. հողը կը մշակէր, հողին արտադրութիւններով կ'ապրէր։ Բայց որչափ մարդիկ աճեցան ու բազմացան, իրենց հետ պէտքերն ալ շատցան. ու երկրագործութիւնը սկսաւ՝ հետզհետէ հիւսուսութիւնով մէկ քանի արհեստներու բաժնուիլ. և այս արհեստները ա՛յնչափ բազմացան ու հեռացան հողէն ու իր մշակութենէն, որչափ մարդկութեան աճումին հետ քաղաքակրթութիւնը յառաջացաւ։ Ու մարդը հեռացաւ գիւղէն, դաշտէն, մոռցաւ արօրը, մոռցաւ եզն ու ոչխարը. սակայն հողին ու կանաչին սէրը միշտ կա՛յ ու կը մնայ մարդու սրտին մէջ։ Ո՜հ, հո՛ղը մարդկութեան մայրն է, բնութեան արգանդն է, որ իր վրայ ծգուած ատեղագարդ կապոյտ պատմուճանին տակ, իր մերկ ու լերկ սարերն ու հարթերը պըճնած ու դիւթելագարդած է դալար հրապոյրներով՝ կեանքը իրմէ կը ծնի, մահը իր ծոցը կ'ամփոփուի։ Կեանքն ու մահը՝ գոյութեան երկու բեւեռներն են, մին կ'սկսի երբ միւսը կը վերջանայ. նա արշալո՛յսն է, սա՝ վերջալոյսը. իրարու ա՛յնչափ մօտ են որ, իրարմէ լոյսի ու խաւարի խառն գծով մը զատուած են։ Առա՛նց մէկուն, միւսը գոյութիւն չունի. առա՛նց մահու՝ կեանքը չի վերածնիր. այդ վերածնող կեանքը, այդ շաղկապուած յաւիտենականութիւնը, անըմբռնելի ու անընկճելի զօրութիւնը՝ կ'ոռնի, կուռնի կը տարածուի՝ վերածնող էլեքտրական հոսանուտին պէս ամենուրեք, ոսոնապատ լերանց կատարին վրայ՝ կը ցցուի կենդանային կամ բուսային երեւոյթին տակ ծածկուած, կ'ինչնէ մինչեւ անյատակ ովկիանոսներու խորերը, կը բարձրանայ դերբուկ ժայռերն ի վեր՝ մինչեւ անոնց անհպելի, անմատչելի սարերը, կը թափանցէ անապատներու կիզիչ սահմաններէն ներս, կը ծփծփայ մթնոլորտի անտեսանելի խաւերուն մէջ, խռնկի մը պէս կը բարձրանայ, կը տարածուի անհունութենէ անհունութիւն, ամէն տեղ, ամէն բանի մէջ վերջալոյս, շարժում ու ոգեւորութիւն կը դնէ, ԳԵՐԱԳՈՅՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԻՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅՈԼԱՑՆԷ՝ ՎԵՐԱԾՆՈՂ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ։ Այս անըմբռնելի զօրութի՛ւնը, այդ անծանօթ, անեզր մշտնջենականութի՛ւնը, որ նոյն իսկ՝ մահացած դիակէն դո՛ւրս կը ճառագայթէ, որ անտառներու հսկայ ծառերու մեռած ու փտած կոճղը՝ կենսաբարգաւ բո՛յնի մը կը փոխարկէ, ուրկէ դո՛ւրս կը ցոլան էութիւնը կենդանիին, գոյութիւնը բոյսին, կազմութիւնը քարին ու մետալին։ Ո՞վ է, ըսէք, ի՞նչ է այդ հսկայ ու սհաւոր շարժումը, այդ տիեզերական հարկեցուցիչ պէտքը՝ որ բնութեան քօղին տակ ծածկուած, բնութիւնը կ'ապրեցնէ, բնութիւնով կը մշտնջենաւորի, և որ բոլորակի մը պէս անեզր է, ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վախճան, այլ կը վերածնի շարունակ՝ կը փոխարկի ու կը վերածնի յաւէտ։ Կենդանին կը մեռնի՝ ծնունդ տալու համար բոյսին, բոյսը կը ծնի՝ կեանք տալու համար կենդանիին։ Մահը ի՞նչ է որ, կեանքի առերեւոյթ դադարը, անտոյդ գերեզման, ոչնչութիւնը համակ, որու խաւար ծոցէն դուրս կը պոռթկայ, ցոլացող լոյսի մը պէս՝ կեանքը, այդ խորհրդաւոր միութիւնը՝ որ կ'երկարաձգի, կը մատենայ շարունակ անոր՝ գերեզմին, և կը մարճկի անարգել ու խիզախօրէն, անոր անծայրածիր անհունութեան մէջ. և մինչդեռ միամիտներ մահը կը գուժեն, բնութիւնը վերածնող կեանքը կ'աւետէ։

Մահը գոյութիւն չունի բնաջանջրէն, անիկա խոռնարան է գոյութեան, հանգրուանն է հասունցած ու ինկած կեանքին, ուր կը դիմէ սա խիզախօրէն, ձեւափոխուելու, այլակերպուելու, և անհունապէս փոքր կեանքերու վերածուելու, որոնք կը մնանան, կ'ոռնին, կ'ուռնին, բնութեան վերածնող ու բեղմնաւորիչ ոգեւորութեան տակ։ Շամանդալային կամ հիւլէական պարզ փոխադրութիւն մ'է որ տեղի կ'ունենայ, և սակայն կեանքը կը յարատեւէ, առանց վայրկեան մ'իսկ դադար առնելու, շարժունութեան մէջ դնելով նիւթին շամանդաղը կամ հիւլէն։ Մարդը կ'ապրի, ամէն որ իր էութեան մէջ կեանքեր քաղաքելով, կեանքեր մահացնելով. առանց այդ շարընթաց քաղաքումներու (իւրացնել, մարմնացնել, իր մարմնին վերածել=assimiler), մահացումներու, կեանքի

վերածնումը գոյութիւն չունենար. կեանքեր կ'սպառին ուրեմն, նոր կեանքերու ծնունդ տալու համար։ Հա՛ս ցորենի հատիկ մ'է որ կը թաղուի հողին տակ, օրե՛ր կ'անցնին, ու ահա՛ իր ծոցէն դուրս բողբոջած է դալար բոյս մը, ինք բոլորովին ոչնչացած. և այդ նոր բոյսը աճելով ուռճելով, ծնունդ տուած է նոր ցորեններու։ Անդին՝ ինկած ցորենի հատիկը՝ անյարմար պայմաններու տակ, փտած ու նեխած է. այս վերջի բաւերով կը հասկնանք թէ, ցորենին նիւթը կազմալուծուելով, տարբեր մարմիններու ծնունդ տուած է, որոնք՝ իբրև սնունդ պիտի ծառայեն ուրիշ բոյսերու. կամ որ նոյնն է՝ ահա՛ կենդանի մը՝ որ կը մահանայ և հողին տակ կը թաղուի, կը փտի ու կը նեխի. հոս՝ կեա՞նքն է որ կը բաղալուծուի, և հիւլէներու պէս կը տարածուի՝ անհունապէս փոքրիկներու՝ մանրէներու ու մանրեաւոնկերու էութեան մէջ, որոնք՝ անչնչացած դիակի կազմալուծուած նիւթը քատակելով, բոյսերու կեանք տուող գոյանուտներու կը վերածեն զայն. և ահա՛ բոյսն է այս անգամ՝ որ անշնչացած կենդանիին կեանքը կը շարունակէ։ Ու եթէ կեանքը չի յարափոխուէր, չի վերածնէր, անիկա մշտատև ու միակերպ ըլլար, ամէն ինչ անշարժութեան պիտի դատապարտուէր, բնութիւնը իր վեհութենէն ու հրապոյրներէն պիտի մերկանար, մեռելատիպ լռութիւնը պիտի տիրապետէր ամենուրեք, լոյսը խաւարին պիտի խառնուէր, ո՛չ ամառ, ո՛չ ձմեռ, ո՛չ անձրև, ո՛չ արև, ո՛չ նորութիւն, ո՛չ յառաջդիմութիւն, և այն ատեն ահա՛ մահը պիտի թագաւորէր միամիտակ՝ դատարկ ու անյատակ անհունութեան մէջ։

Ո՛հ, քանի՜ անթափանցելի է բնութիւնը՝ իր չքթայուած գաղտնիքներու խորհրդաւոր անեղութիւնով, քանի՜ վսեմ են անոր գերագոյն օրէնքները։ Կեանքը ի՞նչ է որ առանց օդի, առանց խոնաւութեան և առանց ջերմութեան. . . . վսե՛մ ու անքննելի երրորդութիւն, որ ամենուրեք ու յամենայնի գոյութիւն ունիս, և մեծ ես։ Առանց օդի կարելի է՞ ապրիլ. առանց ջուրի կեանքը կ'ունենա՞յ գոյութիւն. առանց ջերմութեան՞. ո՛չ երբէք։ Անոնցմէ ո և է մէկուն պակասութիւնը՝ կեանքը անշարժութեան կը դատապարտեն. ուր որ կեա՛նք կայ, հո՛ն քիմիական յարատև հակազդեցութիւններ կը կատարուին՝ շարժում կայ. ուր որ քիմիական հակազդեցութիւններ տեղի կ'ունենան, հոն վերածնող էլեքտրականութիւն մը կայ, և այդ իսկ է կեանքի՛ մշտարուխ աղբիւրը։ Ահա՛ւասիկ ուրեմն ջուրը՝ օդը՝ ու ջերմութիւնը՝ որ իրար ձուլուելով, իրար քատակուելով, բնութեան վեհաշուք միութիւնը կը ցոլացնեն շարժող տիեզերքին վրայ։

Արիւնը՝ իր շրջանառութեան մէջ քիմիական հակազդեցութեանց կ'ենթարկի, ուրիկ կը ծնի էլեքտրականութիւնը՝ կենդանի էլեքտրականութիւնը։ Մարսողութիւնը պարզապէս քիմիական հակազդեցութեանց արդասիքն է, ուրիկ կը սերի էլեքտրականութիւնը, որ կ'ոգեպահէ կենդանի ջերմութիւնը նիւթին։

Քարը կամ մետաղը, երբ այդ ազդակներու ներգործութենէն զերծ ըլլան, անազարտ կը մնան առերեւոյթ և առկախ անշարժութեամբ մը. ու երբ խոնաւ մթնոլորտին մէջ, նպաստաւոր ջերմութեան մը տակ գտնուին, չէ՞ մի որ օր ըստ օրէ անոնք կազմային փոփոխութիւն մը պիտի կրեն, և այս օրուան միաձոյլ հաստատուն երկաթը, կամ հսկայ պատնէշի մը պէս բարձրացած ապառաժը, պիտի քայքայի ու փշրի։ Ինչ եղաւ իրենց՝ այդ ազդակներու ներգործութեան՝ աներեւոյթ ուժին տակ։ Քիմիական հակազդեցութիւններ են որ ծնունդ առին, և ծնունդ տուին էլեքտրական հոսանուտին, ու նիւթը կազմափոխեցին, ձեւափոխեցին, պարզապէս բնութեան անյեղլի ու անփոփոխելի օրինաց հպատակելով։

Զէ՞ մի որ անհատականութեան կազմաւորութիւնը արդիւնք է բմիճներու վերարտադրութեան ու հատաբաշխութեան, ուրիկ ծնունդ կ'առնու անկերպարան ոգին, և հուսկ անհատականութեան ցեղային քատակն ու տիպը։ Ու ո՛չ ոք կ'ուրանայ թէ, բնութեան այս վսեմ ձեռակերտը, հրաշակերտը՝ կ'էանայ, կը գոյանայ նախասահման օրինաց համաձայն, որ Անեղին ու մշտագոյին գերագոյն կամքն է, որ կը տարածուի ան-

տեսանելի հոսանուտի մը պէս, անըմբռնելի եթերի մը պէս՝ նիւթի հիւլէներու կորիզին մէջ. ու այս ամէն երեւոյթներ տեղի կ'ունենան, հողին տակը, հողին վրայ. ու հողը սերտիւ կապուած է մեր էութեան, մեր գոյութեան հետ. և անոր համար է որ կը սիրենք մենք հողը, որ մեր կենդանութեան ատեն, մեր կեանքը կ'ոգեպահէ, ու երբ կեանքը մենէ բաժնուի, մեր նիւթը կը պահէ իր ծոցին մէջ, ու այդ նիւթի ատիւններուն վրայ է որ բոյսը գոյութիւն կ'ստանայ, կեանք կ'առնու. և անոր միջոցով է որ, մեր նախնեաց նիւթն ու հիւթը կը խառնուի մեր էութեան, և մենք պարզապէս ատնոնց շարունակութիւնը կ'ըլլանք: Ահա՛ այս կերպով ալ, ոչի՛նչ կայ նոր, հինն է ձեւափոխուած, հինն է որ յաւէտ կը նորոգուի, կը վերանորոգուի, կը բաժնուի, կը տարածուի, անհունապէս կը պպտիկնայ, ու դարձեալ կը հաւաքուի, կ'ամփոփուի ու կը ձուլուի, և ահա ԿԵԱ՛ՆՔՆ է միշտ, որ կայ ու կը մնայ ՀՈՂԻՆ ՏԱԿ, ՀՈՂԻՆ ՎՐԱՑ: Այնպէս չէ՞ Պէկեան էֆ.:

Մտերիմդ
Ղ. ԲՈՂԱՏ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՄԱՆՐ ՈՒՍՈՒՄ

Գ.

Բանասէրք դիտեցին անշուշտ թէ ինչպէս Շնորհալի՝ իւր Ընդհանրական Թղթոյն մէջ, կը յանձնարարէ նախ «զԵկեղեցական գիրս ուղիղ ընթեռնուլ» և յետ այնու «զՄանր Ուսումն ճայնաւորացն պաշտել յԵկեղեցիս:»

Եկեղեցական գրոց ուղիղ ընթերցման և ճայնաւորաց Մանր Ուսման մէջ ինչ կապ կայ, ինչո՞ւ ճայնաւոր ընթերցման կը նախադասուի թիւ ընթերցումը, միթէ մին միւսէն կ'ածանցի:

Արդեօք մտքին վսեմ խորհուրդներն արտայայտող նուիրական խօսքերը և հոգւոյն անբաւ յուզմունքը ներդաշնակաւորող զմայլելի գեղգեղանքը իրարու հետ սերտ առընչութիւն մը ունին և Շնորհալի՝ իւր ատենի երաժշտութիւնը թիւ ընթերցման վրա՞յ կը հիմնէ:

Բան մը որ ստուգիւ կրնանք հաստատել՝ այն է թէ Շնորհալւոյն օրով ինչպէս նաև հիմա եղանակին և զայն իր վրայ կրող խօսքին շեշտերը պէտք է զուգադիպին ու երաժշտական պարբերութիւնը իւր ելևէջներով և խօսքին պարբերութիւնը առոգանութեամբ պէտք է որ համաձայն ընթանան:

Միայն թէ եւրոպական երաժշտութիւնը հիմա՝ իր խանձարուրքը թոթափած, իրեն յատուկ դրութեան մը համեմատ եղանակին չափն ու ամանակը կը նշանակէ որով տաղաչափութենէ կ'անջատուի:

Դարձեալ, մատենագրութեան գործածած առոգանութեան և տրոհութեան նշաններէն տարբեր կիտադրութեան նշաններ հնարուած են երաժշտական պարբերութեան համար, որով այսօր արևմուտքի մէջ գրականութիւն և գեղարուեստ իրարմէ բոլորովին զատուած անկախաբար կը մշակուին:

Բայց թէ եղանակներու լեզուն ալ ուրիշ ամէն լեզուներու պէս ունի իւր պարբերութիւնը որ՝ մատենագրական պարբերութեան հաւասար, պէտք է խնամով շեշտուի և զգուշութեամբ տրոհուի, ահա խնդիր մը որ եւրոպական երաժշտութեան ամենէն տարրական գրքերուն մէջ ալ կը բացատրուի, ինչպէս յետագայ օրինակէն կրնան տեսնել ընթերցողք:

«La musique est une langue spéciale et, « comme toutes les langues, elle a ses « phrases, ses membres de phrase et sa ponc- « tuation.

«Une phrase ou période musicale se « compose de plusieurs membres de phrases « divisés eux-mêmes en dessins mélodiques « dont la réunion constitue un ensemble ou « un sens complet ; les membres de phrase « et les dessins mélodiques sont, le plus « souvent, séparés entre eux par des silences « de courte durée.»

«Il est aussi indispensable de bien « phraser dans la langue musicale que de « bien ponctuer dans la langue littéraire; « une phrase sans ponctuation est presque « inintelligible.»

Livre de musique page. 100.
Par Claude Augé
Paris

PÉRIODE DIVISÉE EN MEMBRES DE PHRASE



Imp. Galvaniste MIKAEL, Constantinople, Rue Eski-Zabtié N. 60

Գալով մեր եկեղեցական հին երաժշտութեան՝ գրականութիւն և նուագերգութիւն իրարմէ բաժնուած չեն տակաւին. թիւ ընթերցումն և եղանակ՝ այն աստիճան իրար կը խառնուին, իրարմէ փոխառութիւններն այնչափ առաջ կ'երթայ՝ որ գրաւոր երաժշտութիւնը գոյութիւն չունի առանց գրականութեան։

ՆԱԽ.—Երաժշտութիւնը՝ այբուբէնի ծանօթ տառերը իբր երաժշտական խազ կը գործածէ. այսպէս. աՀ, բՀ, գՀ, դՀ, ակ, բկ, գկ, դկ, բէնկորհ, էկորհ, ճակորհ, չակորհ, պէկորհ, զակորհ, էմվէ, բէյրէ, ինչպէս արդէն գիտեն եկեղեցական երաժշտութեան հմուտ անձինք։

ԵՐԿՐՈՐԴ. — «Ս. Երուսաղէմի վանուց «թանգարանը եղած գրչագիր մատեանի մը «մէջ գրչագիրը շարականաց խազերուն ներ- «քեւ դրուած նօտր գրերուն բացատրութիւ- «նը կը գտնենք այսպէս. բ, բարձր. դ, «դարձ. զ, զարկ. բ, թանձր. լ, լայն. ծ, «ծանր. կ, կամաց. յ, յետ ձգէ. ե, շատ. «Ա, ալինդ, ս, սրէ. վ, վերցու. ց, ցած. «Ք, քարշ.» (Տես Նկարագիր երգոց, էջ 54, Ե. Տնտեսեան, 1874, Կ. Պոլիս)։

ԵՐՐՈՐԴ. — Երաժշտութիւնը մատենագրութեան մէջ գործածուած առոգանութեան նշանները իբր ձայնանիշ կը գործածէ, ինչպէս՝ բութ (՝), շեշտ (՛), պարոյկ (՞), երկար (՜), սուղ (o)։ Իրա՛ւ որ, այժմ տպագրութեան մէջ խափանուած են՝ հին տաղաչափութեան գործածած սուղ (o) և երկար (՜) նշանները, բայց մենք ալ հին գրականութեան խօսքը կ'ընենք. մինչդեռ այդ նշանները՝ ինչպէս նաև գործածութենէ ինկած թաւը Ի և սոսկը Ղ և ուրիշ նշաններ դեռ ի գործածութեան էին։

Այս մեր ըսածը կը հաստատէ Պաղտասար դպիր «Բութն՝ ի գոլն պարակ ի վայր հարկանէ ղձայնն որպէս հաւայն դրմունք

նորին ի Շարակնոցին» . (Տես Բեր . Պատ . Դպ . էջ 579) . ԵՒ քանի որ Շարակնոցն իրրեւ օրինակ կը տրուի մեզ, մենք ևս կ'արտատպենք ցանկն շարականի խազերուն, ուր կարելի է գտնել մեր յիշած բոլոր նշաններն իրրեւ խազ երաժշտական . (Տես էջ 381, Շարական, Կ. Պոլիս, 1831)։

ԶՈՐՐՈՐԴ .— Գալով մատենագրութեան մէջ գործածուած տրոհութեան նշաններուն, կը բաւէ ո՛ և է Շարական մը թղթատել՝ համոզուելու համար որ՝ երաժշտական պարբերութիւնը՝ գրական պարբերութեան պէս, ստորակէտ միջակէտ, և վերջակէտով կը տրոհուի, ինչպէս տե՛ս էջ 295, Շարական, Կ. Պոլիս, 1831։ Դիսէ (կեա : նք) և (մըտի : ց) բառերը անջատող երաժշտական վերջակէտը։

«որպէս ասէ Ներքինացին, թէ էն և Օն «ընութեամբ երկար լինին գիտէ քերթողն . . . «Զի այն օրհնաձայն սուրբ երգեցողութիւնք, «Հնոցհօք Հոգւոյն յարդարեցեալք են և՛ «չափ և՛ քանակ «ունին։ (Տե՛ս էջ «183-184 Գրբ- «քոյկ Նուագա- «րան, 1794, Կ. «Պոլիս)։

Ուստի Շնորհալի, ինչպէս կը տեսնուի, բիւր անգամ իրաւունք ունէր ձայնաւորաց Մանր Ուսումը կամ միավանիւ երաժշտական արուեստին նրբութիւնը եկեղեցական գրոց ուղիղ ընթերցման վրայ հիմնելու։

Յարակից այլ պատճառներու հետ, թիւ ընթերցման աղաւաղելուն վերագրելու է Մանր Ուսման մոռցուիլը՝ և մեր հին երաժշտութեան հետզհետէ խանգարուիլը . որովհետեւ՝

ԱՆՈՒԱՆՔ

ԽԱԶԻՑ ՇԱՐԱԿԱՆՈՑ

Շեշտ	/	Թաչտ	◡	Մնկներ	ↄↄ
Փուշ	✓	Ոլորակ	⌒	Բենկորհ	⌐
Բութ	،	Խունճ	∿	Զակորհ	⌐
Պարոյկ	⌒	Վերնախաղ	⌒	Էկորհ	∽
Երկար	⌒	Ներքնախաղ	⌒	Խում	≈
Սուղ	○	Քարքաչ	⌒	Հուհայ	⌐
Սուր	/	Խոսրովային	~	Փաթութ	⌐
Թուր	)	Մունկ	ↄ	Զարկ	✓

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏՐՈՀՄՈՒՆՔ

Երգ զկնի Տէր հովուեսցէ սաղմոսին

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ .— Եկեղեցական երաժշտութիւնը տաղաչափութեան միջոցաւ կ'որոշէ երաժշտական չափն ու քանակը, որու վրայ երաժշտութիւնը յետոյ կ'ուսուցնէ դիւրը։ «Է երաժշտութիւն ի չափ և ի քանակի, զի

ՆԱԽ .— Երբ Զաքարիա Բ. Կաղզուանցի Ս. պատրիարքին յորդորելովը, 1790ին, Մկրտիչ Շնորհք ամիրա առաջին դպրոցը բացաւ՝ (Տես էջ 240, Պատմ. Ս. Փափազեան, Կ. Պոլիս, 1865) դպրոցը խստապէս եկեղեց-

ոյն գաւիթն էր. հոն դպրաց դաս մը կը պարտատուէր, և Գրիգոր դպիր որ արդէն ծեր ալաւնս էր (*). Կեսարիոյ Սբ. Կարապետի վանքէն յատկապէս Պոլիս բերուեցաւ և Լակնարկութեամբ Նորին սրբազան պատրիարքին Տ. Զաքարիայ աստուածարան բարեսպասին) յօրինեց իր Նուագարան գրքոյկը, ինչպէս կը տեսնենք գրքի կողքի մակագրէն. և իւր ձեռնտուն էր նոյն ինքն Մկրտիչ Շնորհք ինչպէս կ'իմանանք հետեւեալ յիշատակարանէն. «Ցիշեսջիք զաստիճան գիտութեան բարձրացուցանողն նախապէս զձեռնտուն իմ զՇնորհք Շնորհաւորեմ Մկրտիչ ամիրայն». (Տես Գրք. Նուագ. էջ 426, կ. Պոլիս, 1794)։

ԵՐԿՐՈՐԴ.—Ներկայ դարուս սկիզբը՝ Եկեղեցական գրոց վերծանութիւնը միայն եկեղեցւոյ մանկուսյն ընթերցանութեան նիւթ կը մատակարարէր, և մինչեւ 30—40 տարի առաջ, դեռ հին մանկավարժութեան ոգւոյն համաձայն դպրատանց մէջ կը կարդացնէին.

1. Քերական
2. Հեգարան (Սաղմոս)
3. Սաղմոս
4. Աւետարան
5. Գործոց
6. Նարեկ
7. Երգ Երգոց
8. Քերականութիւն
9. Դպրութիւն։

Մինչև որ, դաստիարակութեան ուշադրացումը արդի մանկավարժութեան համեմատ, մեր հայրերուն Սաղմոսին տեղ Մայրենի լեզուն դրաւ, և մեր նախակրթարաններէն տակաւ վերցաւ գրաբարի ուսումն և Եկեղեցական գրոց ընթերցումն։

ԵՐՐՈՐԴ. — Արհեստաւոր չարագրածոց անսխալ ընթերցանութիւնը, և թիւ ընթերցման օրէնքը՝ որ երբեմն խնամքով կ'աւանդուէր ու վերծանումն կը կոչուէր, ի սպառ դադրեցաւ դպրոցներուն մէջ, որոյ ի հաստատութիւն ծայրաքաղ առնելով դնենք հետեւեալն.

«Որպէս բազումք առ ի կատարել զԲ-»
«միայն որպէս հարկ ինչ բռնութեամբ դըրեալ ի վերայ, այնպէս շուտափոյթ ասեն զՍաղմոսն Սուրբ մինչ զի ոչ միայն նշանակութիւնք բառից անյայտանան, այլ նաև գրեթէ՝ իբրեւ անյօդ արտահնչմունք զօդն բաբախեն, ըստ որում քնով ծանրացեալք՝ յերեկոյին ժամուն, զննջեցելոյն պաշտօն որպէս թէ ասելով իբրու կատարեն։ Զոր կերով՝ շատ լաւ լինէր թէ բնաւ ոչ ասէին, քան թէ իբր զպատարագ նախաշաւիղ ողանչին՝ զուսիղ սրտիւ անընդունակ ընծայեն Անկարօտին, յորոց դատելոյ արժանեացն՝ մին և դատողս է.» Քերականութիւն Պաղտասար դպրի էջ 554, կ. Պոլիս, 1738։

«Զի գործածութիւնքն առոգանութեանցն՝
«յենթադատիլն երեւին բանին, զի մինչ ոչ
«գիտեցես զմիտս բանին, զեռ՞դ կարիցես
«շեշտել զվանկն, կամ ութել, կամ ոլորակել,
«կամ երկարել ևն։ Եւ մինչ այսքիկ ոչ ա-
«ծին ի գործ ըստ տեղւոյն, ոչ լինի վերծա-
«նումն, որպէս ասացաւ։ Եւ ծանիր ասա,
«զի ի վերծանութեան տաղաչափական բա-
«նից՝ յետ գիտելոյ զայս ամենայն որ մինչեւ
«ցսոսա ասացաւ, պարտ է գիտել ևս զչափն
«նոցին թէ քանի ոտնեայ է կամ քանա-
«վանկնեայ, և այնպէս վերծանել ըստ իւ-
«րում չափոյն։» Քերականութիւն Պաղտասար դպրի, էջ 581—582, կ. Պոլիս, 1738։

ՉՈՐՐՈՐԴ. — Ձեռագրի կիտադրութեան նշաններն՝ տպագրութեան միջոցին, արդի ըմբռնման համեմատ սրբագրուեցան։

Եթէ հարկ ըլլայ զայս հաստատել, կը-նանք վկայութիւն բերել Զօհրապեանի նման պատկառելի անձնաւորութեան մը խօսքերն իսկ, որ մանրակրկիտ խնամքով, ինը այլ և այլ ձեռագրեր և բազմաթիւ մասնական ձեռագրեր աչքէ անցուց՝ երբ Աստուածաշունչ Մատեանի 1805ի անզուգական տպագրութիւնը պատրաստեց։

«Ի կիտադրութեան մասին ոչ ըստ ամե-
«նայնի զհետ չոգաք զհետ մերումս օրինակի,

(*) Վասն զի՝ Կեսարիոյ Ս. Դանիէլի վանուց ձեռագրաց վրայ խօսուած ատեն, երաժշտական դատագրքի մը գրին յար և նման ըլլալն կը հետեւցուի թէ՝ Մուգանթարաթը թարգմանողին գրիչն եղած է այն, որուն յիշատակարանն է «աւարտեցաւ Մատեան Մեղանուէրային շարագրող գրքոյս Իւսուֆ էֆենտիզատէն է. թարգմանեալ ի Գէորգ դպրէ ՅԾ. Տ. 1770». (Տես «Հանդէս Ամսօրեայ» 1895 թիւ 3. Տ. Վ. Պ.)։

« քանզի ոչ էր ամենայն ուրեք միակերպ կա-
« նոնաւ կիտադրեալ զնման պարբերութիւնս
« բանի ի Նմին վայրի մերթ ստորակիտիւ,
« մերթ միջակիտիւ և մերթ վերջակիտիւ ան-
« խտիր յանգէր։ Նմին իրի պատշաճ թուե-
« ցաւ մեզ յամենայն տեղիս միակերպ կիտա-
« դրել. Տե՛ս Աստուածաշունչ Մատեան,
Զօհրապեան, Ա. Հատոր էջ 27, Վենետիկ 1805։

Զայս Պաղտասար դպիր ալ դիտած է և

ՇՐՋԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ ԿԻՏԻՑ

Վերջակէտ.	Նարեկ	1782 Կ. Պոլիս	էջ 291
Միջակէտ.	Նարեկ	1835 Կ. Պոլիս	էջ 298
Ստորակէտ.	Նարեկ	1851 Վենետիկ	էջ 513
Ստորակէտ.	Նարեկ	1860 Բարիզ	էջ 355

Բայց որպէս զի մեր այս առարկութիւնը լոկ ենթադրութիւն մը չը կարծուի, 1782ի

կը գրէ «Ոմանք ի բազում ուրեք, որպէս և Ոսկան վարդապետն, վասն յոյժ կատարեալ գոլոյ բանին ի տեղի միջակիտին զվերջակէտն դնեն». (Տես Բեր. Պաղտասար դպրի էջ 575)։

Սակայն այս ալ չը բաւելով վերջակէտը միջակէտի փոխուելէ յետոյ, միջակէտն ալ ստորակիտի դարձած է այսօր։ Այս կիտադրութեան հետզհետէ փոխուելու ընթացքին զարմանալի մէկ նմոյշը ի վերևն բանասիրաց կը ներկայացնենք առնելով Նարեկէն հատուած մը։

տպագրութեան ոյն ակնարկուած հատուածին պատկերը կը ներկայացնենք բանասիրաց, միանգամայն մեր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնելով Լեւոն էֆ. Զարիֆեանի (*), որ մեզ համար յատկապէս

(*) Մ. Խ.—«Հանրագիտակ»ի մասնակցելով հանդերձ Մ. Յովհաննէսեան էֆ.ի արտայայտութեանց, այս առթիւ պարտք կը համարի նաև հրապարակաւ իր մասնաւոր շնորհակալիքը մատուցանել առ ինքն՝ Միհրան էֆ. Յովհաննէսեան, որ իր վերոյիշեալ յօդուածներու վերաբերող պատկերներու ամբողջ ծախքը իր կողմէն ընելով, խմբագրութեանս վրայէն ծանր բեռ մը պակեցուցած է։

այդ հատուածը տոսախի վրայ ինք փոխադրեց և իւր ծախիւք փորագրել տուաւ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ. — Աւելի կարեւոր փոփոխութիւն մը յառաջ եկած է անշուշտ շեշտերու օրէնքին ի մեզ օտար նկատուելէն, և եկեղեցական գրոց տպագրութեան միջոցին՝ անոնց ազգային կարծուած դրութեան մը համեմատ սրբագրուելէն, այս ալ կարելի է հաստատել նոյնպէս բարմահմուտ Զոհրապեանի խօսքերովը։

«Նոյնգունակ և զշեշտանշանս ի վերայ «բանից ոչ էր միակերպ եղեալ այլ ի գիրս «ինչ կարի յաճախէր և յայլս սմանս «ի սպառ նուազեցուցանէր յորս մեք ըստ «պատշաճին՝ զաւելորդն յայլուստ լցու«ցաք... ուր զարմանալի իմն թուի, հա«յոց՝ բարբառեալ էրեր ա՝ հաստատ ամենայն էրեր՝ ի վերայ անոնց ա՝ սուելոց յանէրանութիւն՝ ըստ հելլենական ա՝ սանութեան եղեալ Պե՛տրոս, «Յա՛կոբոս, Յովհա՛ննէս և արտաքոյ մե«ռումս սովորութեան, ըստ որում ուսաք «ի բազմավանկ անունս շեշտել զվերջինն «գրելով՝ Պետրո՛ս, Յակոբո՛ս, Յովհաննէ՛ս. «Տես Աստուածաշունչ Մատեան Զոհրապ«եան, էջ 27, Վենետիկ, 1805։

(Շար.) ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՏԻԱՐ ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ ԵՒ ԻՒՐ ՅՈԲԵԼԵԱՆ

«Հանրագիտակ»՝ 1899 Յունիս 5ին, իւր Գ.րդ Շրջանի 61րդ թուով, Կովկասահայ Տիար Պերճ Պռոշեանցի գրական գործունէութեան քառասնամեակին ՅՈԲԵԼՈՒՄՆ իր ընթերցողաց աւետած առեն, աստղանշով մը կ'ծանօթագրէր յետագայ խորհրդաւոր տողերը.

«Մխիթարեան գրոց մը կը շրջի կարգ մը «շրջանակաց մէջ, թէ մօտերս «ԱՐԵՒԵԼԵԱՆ «ՄԱՄԼՈՅ» ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ՝ Տիար Մ. ՄԱ«ՄՈՒՐԵԱՆԻ Յոբելեանն Զմիւռնայի կամ «Պոլսոյ մէջ պիտի կատարուի։»

Ուրախ ենք որ Յոնիոյ Մայրաքաղաքին Հայքն՝ «Հանրագիտակ»ի գրոյցն՝ իբրև հանրային զեկոյց՝ ընդունելով, հայտնեցին իրենց Մեծանուն Հայրենակցին, իրենց Մեծ Քաղաքացւոյն Յոբելեանն արժանաւոր կերպով կատարելու նախաձեռնարկն հանդիսանալ։ Պոլսոյ մեր բուն ազգային մեծ օրաթերթերուն՝ «Բիւզանդիոն»ի և «Արեւելք»ի գմիւռնական կտրճագիր թղթակիցքն ալ՝ ինչպէս որ՝ ծանուցին Մամուրեան Յոբելեանի գաղափարն Պոլսեցիներէն առաջ Իրենք ընդունած լինելին։ Այն տողերս՝ յաջորդաց հետ՝ արդէն գրուած և հրատարակումն առի վաւերացումն յղուած կ'մնային; երբ այս առաւօտ 1899 յուլիս 1 թուականով Զմիւռնայէն, բաց պահարանով՝ ՄԱՄՈՒՐԵԱՆ-ՅՈԲԵԼԵԱՆԻ Մատնաժողովին ներփակեալ տպագիր յայտարարութիւնն ընդունեցաւ «Հանրագիտակ», որ իւր արդէն գրած տողերուն՝ իբր վերջնական կամ լրացուցիչ՝ ամբողջութեամբ կը հրատարակէ, ի պայտուպատկան տեղեկութիւն Գեղեցիկ Դպրութեանց, ու Ազգային Մուսայից հաւատացող ու ընթերցող ներսահման թէ արտասահման բոլոր Հայոց ու Հայուհեաց։

* *

Դարուս եւրոպացի ականաւոր դիւանագէտ ու աշխարհավար վեհապետներէն մին՝ խորհրդարանի բեմէն կը յայտարարէր թէ՝ «Կ'ուզէք հասկնալ Երկրի մը, Ազգի մը յառաջդիմութեան աստիճանը. հարցուցէք, տնտուեցէք, թէ հոն ինչպէս կը վարձատրուին հանրային մտքի լուսաւորութեան, ազգային քաղաքակրթութեան աշխատաւորները։»

Վեհապետ մ'է որ իւր տիտղոսէն աւելի վեհափառ յայտարարութեամբ մը կ'բանաձեւէ, ի վեր կ'հանէ իւր գահոյքէն աւելի ընդարձակ ու հզօր ըմբռնումի մը բարձունքէն Մտքի Աշխատաւորաց դերին մեծութիւնը։

Եւ այս այն վեհապետն է որ՝ դարուս սկիզբը՝ իւր թնդանոթներովն ու մատենիկ գունդերովը, Եւրոպան արտ ու կալ բրաւ, իբրև նոր իմն երկնաւոր կեսար ու Դիկտատոր, սուրով, հրով տարածելու, գործադրելու համար այն միրկարար ու լուսարար գաղափարները. զորս՝ դարերէ ի վեր քերթողք ու իմաստասէրք իրենց բիլիներու անդորրաւէտ լռութեան մէջ երկնած, ծնած ու սնուցած էին, և զորս 1789ի Յեղաշրջման մեծ հրդեհն՝ իր ծխաշունչ բոցերուն ու աւերց հետ, աւելի սաստիկ բորբոքեց ու աւելի հեռուները տարածեց, թէև իր վեհապետութեան արեւը ի Վատերլօ մարը մտաւ, վերջապէս խաւարեցաւ Ատլանտեանի ծոցը՝ Ս. Հելինէ կղզիին մէջ, սակայն իր յայտարարած ճշմարտութիւնն յաւիտենական անչինջանելին է։ Իր ժամանակին վեհապետաց վեհապետ Պոնապարդ ինքն է որ կը հռչակէ և կը խոստովանի դպրոցին կարեւորութիւնը, և դահլիճի մարդէն աւելի՝ մահիրոյ, գրչի ու գաղափարի մարդն է որ կ'վարէ ու կը քաղաքակրթէ ժողովուրդներն անհատօրէն թէ ընկերովին, և ազգի մը յառաջդիմութեան աստիճանայոյցը կ'համարի նոյն ազգը լուսաւորելու պաշտօնն ստանձնող մտքի աշխատաւորաց ինչպէս վարձատրուիլը։

Մեծին Նաբոլէոնի յայտարարած այն ճշմարտութեան ո՞չ ապաքէն պատմական վկայ և ապացոյց են հանրային երախտագիտութեան, սքանչացման և համակրանաց յայտարար այն աշխարհախուռն հանդէսները, պատմական տօնները, արձանները, յիշատակարանները իրենց սաւօքն հանդերձ, զորս ի սկզբանէ ցայսօր՝ հեթանոս թէ քրիստոնեայ, հին թէ նոր ազգերն՝ ամէն ժամանակի մէջ ընծայած են թէ արժանապէս վարձատրելու, քաջալերելու համար իրենց մտքին մեծ աշխատաւորները, իրենց նշանաւոր զրագէտները, արուեստագէտները, գիտուններն, հեղինակները, պատմագէտները, իրենց կենդանութեան ատեն. և թէ՝ յետ մահուն, անոնց յիշատակները պատուելու, անմահացնելու և ապագայ սերնդոց հետեւելի օրինակ հանդիսացնելու համար։ Հանճարները վարձատրելը նոր հանճարներ ստեղծել է։

Թէև եղած են ժողովուրդներ, և դեռ կան ու պիտի ըլլան այլ և այլ ազգերու մէջ՝ մարդկային դասակարգեր, ո՛չ միայն ցեղտներ, գիտուններ՝ իսկ. որք այլոց կամ իր նմանեաց իմացական գերազանցութեան վերայ աքանչանալու տեղ, առ նախանձու կ'արհամարհեն, և ուրիշին արժանիքն ու փառքն ուրանալուն մէջ կ'փնտռեն իրենց փառքն ու արժանիքը։

Պատմութիւնն այսպիսի ուրացական իմաստասիրութեա՞ն ըսենք՝ թէ իմաստակութեան ալանդին յարող շատ մ'երկտանի և անփետուր կենդանիներու տխուր յիշատակները պահած է ու պիտի պահէ դեռ, ցոչտի նախանձն ու իմաստակութիւնը մեր Մոսրակին վրայ գոյութեան իրաւունք ունենալէ չի դադրին։ Մեր Ազգն ալ՝ որ արեւուն տակ ու մարդկութեան Հայրենիքին մէջ ուրիշ ազգաց բազդատմամբ բացառութիւն մը չի կազմեր, իր ազգային մտքին վատակարեկ հերկագործները թէ քաջալերելու, կենդանացնելու առաքինութիւնը և թէ վհատեցնելով մեռցնելու մոլութիւններն ունեցած է։ Ինչպէս Հոմերոս մուրացիկ պատցնող և Սոկրատը մոլախինդով մեռցնող Հելլադայի ճակտին արատը չի կրնար ջնջել Հերոդոտի պատմագրութիւնը, ոսկիներու տարազով վարձատրող և Դէմոսթէնի ճառերը ծափերով ու ոսկեղէն պսակով քաջալերող Հելլադան. նոյնպէս և Խորենացւոյն ոսկերտիքը գերեզմանէն իսկ հանելով, ջուրին, հովին նետող ազգային ապերախտութիւնը չի մոռցուիր 19 դարու արեւուն դէմ ճակատած ջղջիկներու հրամանատ Զամուռճեան պատուելիին կենսագրութիւնը 15 ոսկի մրցանակով մը պատուելու երախտագիտութեամբը։

* * *

Մեր մեռած մեծերն ու հանճարները և անոնց յիշատակները պատուած, փառաւորած ատեն, չի մոռնանք վարձատրել ու փառաբանել նաև մեր կենդանի մեծերն ու կենդանի հանճարները և անոնց ազգօգուտ ու հանրաշահ գործերը։

Սհա Տիար Մատթէոս Մամուրեանի Յոբէլեանը բարեպատեհ առիթ մ'է, ուր ազ-

գովին ապացուցանենք թէ՝ ինչպէս կ'վարնարենք մեր մտքի մեծ աշխատասիրները, մեր լուսաւորութեան հեղինակները, մեր բարոյական Մենարները, մեր ներկայ ու ապագայ սերնդոց հասկցնելու համար, մեր այժմեան ազգային զգայմանց ու մտածմանց յառաջդիմութեան ասպիճանը։

Զմիւռնայի Սմեն. Առաջնորդ Մուրատեանց Մելքիսեդեկ Արքեպիսկոպոսին նախագահութեամբը Մամուրեան Յոբելեանի Յանձնաժողովին հրաւիրագրերն ահա ամենուրեք, երիկն ներս թէ դուրս տարածեցին, աւետեցին օրուան ազգային մեծ լուրը։ Ազգային Մամուլը և ազգային գրագէտք իրենց Ուրագ Ներկայացուցչին, իրենց Նահապետին, և ազգային ուսուցչական Մարմինք իրենց մեծ վարպետին, ազգային իմացական շարժման ու գործունէութեան վարիչք, իրենց Պետերէն մին — գերագրական Մեծին ու Գլխաւորին — Յիսնամեակը արժանապէս տօնելու, փառաւորելու համար մրցելու են աննախանձ։

Փառքն ո՛րքան պատուական նոյնքան և սիրի պատուական կ'պատկանի։

Մամուրեան՝ իբրև վարժարանաց տնօրէն ու ուսուցիչ, իբրև յօդուածագիր ու խմբագիր, իբրև հեղինակ ու թարգմանիչ, իբրև ճարտուն խմաստասէր ու բանասէր, իբրև գրագէտ ու պատմագէտ՝ իր բոլոր տիտղոսներուն արժանի գերազանցութեամբ կատարած է իր հանրօգուտ պաշտօնները։

Մեր յօդուածի այն մասին իբր միջանկեալ շարունակութիւն մը, և իբրև Հրաւիրագիր մ'առ ընթերցողս կ'հրատարակենք յետագան։

ՄԵՆԱՐ

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՆԱԺՈՂՈՎԻՆ

ՅՈԲԵԼԵԱՆ

Պ. ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

Տոհմային գրականութեան և դաստիարակութեան բազմամեայ մշակն՝ Պ. Մատթէոս Մամուրեան, իր տկարութեան առթիւ և բժշկաց խորհրդով՝ պարտաւորուած է թողուլ իր սիրած աշխատութիւններն, և հանգըստութեան մէջ անցնել իր բազմաբեղուն կենաց ծերութեան օրերն։

Պ. Մամուրեանի կեանքն բեղմնաւոր է ամէն տեսակէտով, թէ՝ գրական ասպարիզին մէջ և թէ՝ դաստիարակութեան։ Սակայն այդ կեանքի ուսումնասիրութիւնն չէ՝, որ պիտի ներկայացնենք մենք այժմ, այլ՝ գործունէութեան արդեանց մի համառօտագիծ պատկերն՝ 1850 թուականէն սկսեալ։

Պ. Մամուրեան Տեսուչ կարգուած է Կ. Պոլսոյ Խասգիւղի Ներսիսեան վարժարանին. հիմնադիր եղած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի գիւանական կարգադրութեան, որոյ հասուցած պաշտօնեաներէն է այսօր՝ նշանաւոր դիւանագիտ Բարթող էֆ. Թէլեան։

Պ. Մամուրեան նախկին «Մաղիկ» թերթի խմբագրութեան մասնակցութենէ զատ՝ յԻզմիր և ի Կ. Պոլիս, այսօր շուրջ 30 տարի է, որ կը հրատարակէ «Արև. Մամուլն»։

Պ. Մամուրեանի գրական երկասիրութիւններն բազմաթիւ են՝ վիպական, նամակագրական, թարգմանական, թատերական, մանկավարժական, պատմական, իմաստասիրական և այլն։

Պ. Մամուրեան Խասգիւղի վարժարանի Տեսչութենէն զատ՝ 1867 թուականէն ի վեր անընդհատ դաստիարակութեան պաշտօն վարած է ի Զմիւռնի, Մեսրոպեան և Հռիփսիմեան վարժարանաց մէջ, որպէս Տեսուչ և Ուսուցիչ գիտութեանց և լեզուաց։

Այս արդիւնաշատ Մշակն այսօր գործէ կը քաշուի բժշկաց խորհրդով. բայց իր գրական երկերն սիրողներու և իր բազմաթիւ աշակերտներու սրտերն չեն քաշուիր իրմէն։ Նոքա միշտ իրեն հետ են՝ մտքով, սրտով և հոգւով, չի քաջ գիտեն թէ՝ ո՛չ միայն բանիւ, այլ և գրչով պաշտպանած է Հայոց եկեղեցական իրաւունքներն. պաշտպանած է կրթութեան և կրթարանաց կարևորութիւնն. պաշտպանած է ժողովրդի բարոյական գոյութեան օգուտներն։ Միով բանիւ պաշտպանած է ամէն բան, ինչ որ բարի է, օգտակար և ճշմարիտ, և այս պաշտպանութեան համար կրած է շատ զոհողութիւններ, որ

ամեն ճշմարտասէրներու թէ՛ բաժինն է և թէ՛ վիճարութիւնը։

Արդ՝ մի այսպիսի քրտնաջան և բազմարդիւն Մշակի գրական և դաստիարակական Ցարելեանն տօնելու համար՝ կը յայտարարուի թէ՝ իր գրագիտական հանճարն գնահատողներու և երախտագէտ աշակերտներու վաղուց ասած փափաքանաց համաձայն՝ յատուկ մասնախումբ կազմուած է վիճակիս Առաջնորդ Տ. Մելքիսեդեկ Սրբազան Հօր նախագահութեամբ։

Մասնաժողովոյ անդամք են՝

Տ. Յովհ. Քհնյ. Մինասեան
Տ. Յարութիւն » Եղիվարդեան
Ստեփան Սպարթալի
Գ. Յ. Բարագեան
Յակոբ Վէմեան
Խորով Եփրեմ
Յակոբ Տէր Դաւթարեան
Աւետիս Տիվրիկեան

Ցարելեանի հանդէսը պիտի կատարուի առաջիկայ Հոկտեմբեր 17|29 կիրակի օր։

Դրամական և այլ նուէրներ, հեռագիրներ, ուղերձներ և ամեն տեսակ թղթակցութիւնք, որք պիտի արձանագրուին և ապա մասնաւոր Տեղեկագրով հրատարակուին, կ՝ուղղուին Ս. Նախագահին հետևեալ հասցէով

Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկ. Մուրատեանց
Իզմիր

Monseigneur Melchisedec Mouradianz
Smyrne

Իզմիր, 1 Յուլիս 1899

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԲՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՏՈԳԴ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆԻ «Մենդական Գործարանք» գրքին առթիւ

Մենք՝ թէև որոշած էինք այս նիւթին վրայ այլ ևս բան մը չի գրել, աւելի խըղճմտօրէն վարուած ըլլալու համար, բայց վերջին անգամ «Բիւզանդիոն» օրաթերթի 833 թուոյն և «Մասիս» կիսամսաթերթի 13—14 միացեալ թիւերուն, ինչպէս և «Մաղիկ» շաբաթաթերթի 52րդ թուոյն մէջ (Լևոն Շաթըրեան ստորագրութեամբ) երևցած դեր ու դէմ գրութիւնները կ՝ստիպեն զմեզ, անգամ մը ևս հրապարակել ու ապացուցանել թէ, այդ գիրքը՝ ընթերցողին աւելի անբարոյականութիւն ու ապուռ մոլութիւններ սովրեցնելու նպատակաւ, և այդու՝ ժողովուրդէն «դրամ չարթելու» գծուած շահադիտումով գրուած է, թէ անիկա, բարոյականի և ընկերական բարեվայելչութեան սկզբունքներուն հակառակ հրատարակութիւն մ՝է, թէ աւելի ցորենի մէջ ցանուած որամ մ՝է, քան թէ ճշմարիտ առողջապահութեան գիրք մը՝ որ գրուած ըլլայ ձեռնհաս, լուրջ և խղճամիտ անձի մը կողմէ։

Բայց աւելի, ցաւելո՛վ կը ցաւինք մանաւանդ անո՛նց վրայ, որոնք չենք գիտեր ինչ թագուն նպատակներով տոգորուն, կամ աւելի կեղծաւոր ու չողմարար բնաւորութեան մը հետևանօք, չարին բարի՝ բարին չար կ՝ըսեն, և կը փափաքին որ, այդպիսի լպիրշ, խայտառակ ու ասկէ անկէ ժողովուած ապտեղի թափթփուքներ, ժողովուրդի ձեռքը տրուին, իբրև ուղղեցոյց առողջապահութեա՛ն... վա՛յ այդպիսիներուն։ Թէև անորոշ կերպով, իրենցպէսներուն յարմարագոյն պատասխանը նախապէս արձակած էինք «Հանրագիտակ»ի 63 և 64րդ թիւերուն մէջ, բայց հարկ կը տեսնենք իբրև անաչառ հրապարակագիր, այս անգամ ուղղակի իրենց ճակտին դրոշմել, զիրենք բնաւորու-

թեամբ, կրթութեամբ և բարոյապէս սրա-
կող կնիքը, և իրենց կեղծ դիմակը՝ դէմ-
քերնուն վրայէն վար առնելով, գոյներնին
երևան բերել։ Միայն թէ, կարևոր կը դա-
տենք նախ մեր ազնիւ ընթերցողաց լուրջ
դատողութեան ներկայացնել այդ ազատելի
գրքին առթիւ գրուած, և ի վերև յիշուած
«Բիւզանդիոն»ի և «Մասիս»ի կարծիքները,
զոր բաղդատութեան դնել թէև չ'արժեր,
քանի որ մին՝ առաջինը, թէև Դամոկլեսեան
սուրի մը պէս ահեղ ու ջախջախիչ, բայց
անկեղծ՝ ու ընկերաբանական ճշմարիտ սկզբ-
ունքներու ճշգրիտ ոգին կը կրէ, և անա-
չառ քննադատի, հօր մը, կամ եղբօր մը պէս՝
խորհուրդ կուտայ այդ անխորհուրդ տոքթ-
որին, որ իր չափն ու արժանիքը ճանչնայ.
իսկ միւսը՝ հա՞րկ է ըսել, անխորհուրդ, ան-
իմաստ, և ազգային թեթևաբարոյ ընթ-
ացքով մը, անբարոյականութիւնը պաշտ-
պանել ու տարածելու մեղադրելի անխոհեմ-
ութիւնը գործելէ չի քաշուիր։ Մենք՝ որ
տարբեր համարում ու համակրանք մ'ունէ-
ինք այդ վերջինին նկատմամբ, և իր յառաջ-
դիմութեան անկեղծ փափաքողներէն էինք
և ենք, ինքնին կուգայ այս առթիւ մեր կար-
ծիքը արբագրելու։

Ահաւասիկ սակայն «Բիւզանդիոն»ի վե-
րոյիշեալ խմբագրականի այն հատուածը՝ որ
վերաբերութիւն ունի մեր ներկայ խնդրոյն
հետ, և գրած է Սահակ-Մեսրոպեան հան-
դէսին առթիւ, յանձնաժողովին որոշումնե-
րուն վրայ, որ՝ ինչպէս գիտենք, անցեալ
շաբթու տեղի ունեցաւ։

«Գալով Տքդ. Տաղաւարեանի ձախող-
ուածին, կ'զարմանանք այս երիտասարդին
տարապայման յաւակնութիւնէն(*), որ իրարմէ
բաղդատելի տարբեր նիւթերու վրայ հեղինա-
կութեան իրաւունք ստանալ կ'ցուսայ, ան-
կապ, անյար, անյօդ, քաղուածոյ, սոդիէն
անդիէն ուղիղ կամ սխալ թարգմանուած
կամ ընդօրինակուած կտորներ, յօդուածներ
քով քովի բերելով, և իբրեւ ինքնուրոյն երկ
հրապարակ հանել փորձելով։ Ուրիշ ամէն
նիւթ կրնար ներուիլ իրեն, բայց ի՞նչ յան-
դգնութիւն «Հայոց իմացական զարգացման
պատմութիւնը» գրել «ամենահին ժամանակ-
ներէն մինչեւ 1875»։ Ի՞նչ ճշտութիւն սահ-
մաններու, և ի՞նչպիսի սիստեմատիկանութիւն
ընդհանրութիւններու։ «Ամենահին ժամանակներէն
մինչեւ սա երէկուան օրս, 1875»։ Ամէնէն
հմուտ, ամէնէն գիտնական, ամէնէն իմաս-
տասէր Հայն անգամ, իր ամբողջ կեանքը
զոհելով, հազիւ կրնար բաւել այսպիսի նիւթ-
մը մշակելու։ բայց երիտասարդ բժիշկն, որ
աւելի իր թարգմանածներով ծանօթ է քան
իր բժշկածներով, յուսացեր է քանի մը լրա-
գրական ցուցակներ և յատուկ անուանց ցան-
կեր եռեւէ եռև շարելով՝ «Հայոց իմացական
զարգացման պատմութիւնը» գրել, իբրև նոր
Իմն Թոմաս Պըքլ մը, իբրև նոր Իմն Տրէյբըր
մը, կամ իբրև նոր Թէն մը։ Մա՛րդ Աստու-
ծոյ, քեզ ի՞նչ փոյթ Հայոց իմացական զար-
գացումը։ Իշի՛ր, իշի՛ր, աւելի վարերն իշիր,
դէպ ա՛ն տեղուանքն ուր... սեռական գոր-
ծարաններու վրայ վերջերս հրատարակած
գրատկերներդ, ուրուագծերդ, խոհերդ ու
մտածումներդ զբաղեցնեն զքեզ, և պատա-
նեկութեան համար հրապուրիչ և գայթակ-
ղեցուցիչ գրքեր գրելով, փարա վաստկելու
միջոցը տան քեզ, եթէ ուրիշ միջոց չունիս
դրամ շահելու։ Դուք ա՛յն տեղերէն, ա՛յն-
պիսի նիւթերէն համ կ'առնուք(*), ինչպէս
Պօղոս Առաքելոյն յիշած կենդանիք՝ աղբիւ-
սի կոյտերէն, և հոն պէտք էր մնայիք, ձեր
չափը գիտնալով։ Ո՞ւր ձեր վերջին հրատա-
րակութիւն, ո՞ւր Հայոց իմացական զարգա-
ցումը։ Արդեօք Պէրպէրեան էֆ.ի ընտիր
քննադատականը դաս մը պիտի ըլլա՞յ(**) ձեզ,
այն քննադատականն որ թէ՛ իմաստասիրա-
կան և թէ՛ գրագիտական տեսակէտով, է՛ն
լաւ գրուածն էր իր տեսակին մէջ։ Ինչպէս

(*) Ըսէ՛ք, բարեկա՛մ, նաև տարապայման
եսամոլութեան, և իր վրայ հրապարակաւ
խօսեցնելու անարակելի խաչադրութեան.
երբ՝ երկրորդ անգամ՝ Եւրոպա գնաց ու
մոռցուեցաւ, իր վրայ խօսեցնել տալու հա-
մար ինքզինքը մեռած յայտարարել տուաւ։
Ծ. Ց.

(*) Ծ. Ց.—Անշուշտ իր պաշտպաններն
ու կուսակիցներն ալ։

(**) Ծ. Ց. Եթէ սևը աճառով ճերմակնայ,
և խեղը իրատէն հասկնայ, ծննդախօս Տոգդ.ն
ալ Պէրպէրեան էֆ.ի դասէն կ'խելօքնայ։

Տաղաւարեանի ձեռագիրն ամենէն ձախող կտորն էր Սահակ—Մեսրոպեան այս Մրցանակաբաշխութեան մէջ, անկեղծութեան պարտք մ'է ըսել թէ Պէրպէրեանի քննադատականն ալ է'ն յաջող և է'ն օրինակելի գրութիւնն էր։ Երանի՜ թէ Ցանձնաժողովն ամէն անդամ Պէրպէրեանի չափ կարող և անաչառ դատաւորներ գտնէր, կամ Պէրպէրեանի պէս քննադատներու զրկէր դէթ ա՛յն գրուածները, զորս իրեն յատուկ մասնաւոր պատճառներ չունի վարձատրելու։» (Թ.—ՀԱՐԳԻՆ)

(Շար.) ԿԵՍԱՐ

ՀԱՅ ՀՌՈՎՄԷԱԿԱՆԱՑ

Կ.—ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ

Աւագանեաց Ընդհ. Ժողովը գումարուեցաւ անցեալ կիրակի, Յուլիս 11, ժամը 5 ու կէսին, Բերա Սագըչ-Ագամ Հայ Հռովմէականաց Պատրիարքարանին մէջ։

Կ.—Պատրիարքական փոխանորդ Արհ. Տ. Աւետիս Արքեպիսկոպոս Արփիարեան, թէ՛ դիւանը կը ներկայացնէր և թէ՛ Ժողովին Նախագահութիւնը։

Շիշմանեան Զարեհ էֆ.ի մէկ հարցապնդման համաձայն, Ժողովականք՝ խորհրդարանական յարգանք մը մատուցին նորոգ վախճանեալ Կ.—Պատրիարքի յիշատակին։

Փափաքելի էր որ, այս պատեհ առթիւ ազգովին շնորհակալութեան քուէ տրուէր նաև Մարաշաբնակ Հայ Հռովմ. ազնուահոգի բարերար՝ Խըրլադզատէ Եղբարց, որ ինքնաբերաբար բարեհաճած են, իրենց անձնական ծախիւք 60 հոգինոց տեղական Որբանոց մը հաստատել։

Ժողովոյ 66 անդամներէն 56ը միայն ներկայ էին։

Կարծեաց փոքրիկ փոխանակութենէ մը ետև, քուէները բաշխուեցան, և քուէից բացարձակ առաւելութեամբ հետևեալ հինգ եպիսկոպոսները ընտրուեցան, որք են՝

1.—Տ. Պօղոս եպիսկոպոս Թէրզեան՝ Ամասիոյ. 44 քուէ։

2.—Տ. Կարապետ եպիսկոպոս Բիւրեան՝ Կարնոյ. 39 քուէ։

3.—Տ. Սահակ Արքեպիսկոպոս Հաճեան՝ Սեբաստիոյ և Եւդոկիոյ. 38 քուէ։

4.—Տ. Պօղոս եպիսկոպոս Էմմանուէլեան՝ Կեսարիոյ. 37 քուէ։

5.—Տ. Միքայէլ եպիսկոպոս Խաչատուրեան՝ Մելիտինոյ. 31 քուէ։

Երեքշաբթի և չորեքշաբթի օրերը Սինոդի անդամք կրկին ժողովներ գումարելով, Կ.—Պատրիարք ընտրեցին Կեսարիոյ Առաջնորդ Արհ. Տ. Պօղոս Էմմանուէլեան եպիսկոպոսը, որ թէև հիւանդկոխ մէկը կ'երևայ ինքը, բայց իրօք հիւանդ չէ՛, մանաւանդ այսօրերս։

Տ. Էմմանուէլեան պահպանողական եկեղեցական մ'է։ Զուարթախօսութիւնը չատ կը սիրէ։ Կենցաղագիտութեան մէջ սեթևեթներ չունի։ «Տէրվիշ» եկեղեցական մ'է։ Հին օրերու «մէնքըպէ»ներով կը համեմէ իր խօսակցութիւնները, և Ս. Աւետարանի առակները կը բացատրէ երբեմն արարերէն ներկուռ ոճով մը։

Ծնած է Էմմանուէլեան եպիսկ. 1829 Յունուար 16ին։ Բնիկ Մէրտինի Թէլէրմէն գիւղէն է։ Նախնական ուսմունքը՝ Զմմառաւած, և յետոյ՝ Բրօբականտա կատարելագործած և Աստուածաբան դարձած է։ Գիտէ Հայերէն, Իտալերէն, Լատիներէն, Արաբերէն, Թրքերէն և Քրտերէն։ Էմմանուէլեան՝ 30 տարիներէ ի վեր Կեսարիան կը հովուէ ու կը հոլովէ։ Տաճկական օրինաց հմուտ է կ'ըսեն։ Շէրիի լեզուէն ալ քաջ հասկցող մը կ'երևայ, ինչպէս և մեր Պալեան Տրդատ Սրբազանին ոչ նուազ բարեկամն ու բարեացակամն է։

Կարծես Կեսարիոյ ժամանակակից Առաջնորդները՝ ընդարձակ ժամանակ ալ կը գըտնեն կամ կը գողնան գրական գործերով ալ զբաղելու։ Տ. Տրդատ եպիսկոպոսին գրական աշխատասիրութիւններն յայտնի են։ Էմմանուէլեանինը՝ երկհատոր փիլիսոփայութիւն մ'է, ինչպէս նաև տաճկերէն լեզուաւ մէկ-երկու հոգեւոր երկեր, և ասուարահատոր Աստուածաբանութիւն մը։

Պիտի շարունակենք մեր տեսութիւնները և քննադատութիւնները յառաջիկայ տարի, իրաքանչիւր յօդուածոյ մէջ՝ Սիւնհոդոսականներէն միոյն համառօտագիծ կենսագրականը զետեղելով։

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑԱՆԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. թիւ 66 էն)

—o—

Այս գործողութիւնը կատարելէ վերջ կ'երթանք այն փեթակին քով, որուն պառուած մայրը փոխել պէտք է։ Կ'առնենք քիչ մը ականամամ (փիլպոնի), քիչ մ'ալ ջերջի կտորներ, ու շաքարի կտորուանք, և իրար կը խառնենք։ Այս խառնուրդը լաթի կտորի մը մէջ դնելով, դերձանով կը կապենք ու կը վառենք։ Ասոր ծուխը կու տանք փեթակին մեղուներուն, որոնք՝ ինչպէս ըսած է Հ. Քաջունի՝ հոտէն դուրս կը փախչին. այդ ժամանակ պէտք է ծերացած մայրն առնենք և նոր մայրը ու գործաւոր մեղուները նոյն ծուխին վրայ բռնելէ վերջ, թելէ ամանին տակի շարժական տախտակը վերցնենք և փեթակին ներսի ջերջին վրայ հաստատենք։ Քիչ վերջը դուրսի մեղուները ներս գալով, շուտով կ'ընտելանան դեռահասակ մօր. այսպէս՝ կատարած կ'ըլլանք մայր մեղուին փոխանակութիւնը։

Գիտենք թէ մեղուարոյծի մը բուն նպատակն է շատ մեղր քաղել, բայց ինչպէս ըսինք փեթակներուն վրայ խօսած ատենին, շատ անգամ փեթակներէն մէկէ աւելի գաղթականութիւններ կ'ելլեն, և ներսը մնացած ընտանիքը նուազելով, բնականաբար սպասուած արդիւնքը չունենար։ Ուստի ուրիշ միջոցի մը դիմելով՝ հասանք մեր այդ նպատակին։ Այսպէս՝ երբոր մայիսին մէջ մեղուները պիտի գաղթեն, քանի մը օր առաջ մայր մեղուներուն բջիջները կը նայինք, եթէ հաւկիթ, թրթուր կամ հարսնուկ կայ՝ կը վերցնենք. որովհետև՝ գիտնալու ենք որ, գաղթականութիւնները գլխաւորաբար մայր մեղուներուն մէկէ աւելի գտնուելովը, և ասոնց իրարու դէմ մղած պատերազմովը յառաջ կու գան։ Այսպէս՝ այն գործողութիւնը 10-20 օրուան մէջ կրկնելու ենք հինգ տասն անգամ, այն տեղն ընտանիքը պիտի ըլլայ բազմաժողով, գործաւոր մեղուներով լեցուն և մեղր լեցնելիք ջերջերով լի, ուրիշ միայն կրնանք առատապէս մեղր քաղել։

Ըստ մեզ՝ աւելի դիւրին և դիւրագործածելին՝ փեթակներու վրայ խօսուած ատեն՝ ցոյց տրուած միջոցն է։ Այս վերջինը թէև կրնայ աւելի օգտակարութիւն մ'ունենալ, բայց դժուար է։

Շատ անգամ տաք օդի տակն փեթակին տաջեւի տախտակին վրայ կը տեսնենք կարգ մը մեղուներ, որոնք կեցած իրենց թեւերը կը շարժեն արագ արագ. այս պարագային՝ հասկնալու ենք թէ փեթակին ներսի օդը տաքցած է ու փոխոխութեան պէտք ունի. հետևաբար այդ հովահարող մեղուներուն օգնելու է՝ եռեւի կափարիչը անգամ մը բանալով։ Նաև մեղուները իրենց բնակարանին մէջ մաքրութիւնը կը սիրեն, ուստի անոր համեմատ վարուելու է։ Օտար մեղուները և կամ թշնամիները փեթակին մէջ չմտնելու համար, գործաւոր մեղուներու փոփոխական պահակ խումբ մը դուռն եռեւը միշտ դռնապանութիւն կ'ընէ։

Երբ մայր մեղուն կ'ածէ իր հաւկիթները և կը դնէ բջիջներուն մէջ, մասնաւոր դայեակներ կը խնամեն զանոնք։ Զուերը կը դառնան արդի, հարսնուկի և յետոյ միջատի։ Մայր մեղուի ձուերը կատարեալ կերպարանափոխ՝ միջատ կ'ելլան 15-16 օրէն. գործաւոր մեղուներունը կ'անցնի տասնեւինը կամ քսան օր. իսկ արու մեղուներուն հաւկիթները միջատ ըլլալու համար, պէտք ունին 24-26 և երբեմն 27 օրուան։ Այս բոլոր կերպարանափոխութիւններէն վերջ, կը սկսին գաղթականութիւնները դարնան մէջ։

Շար.

Պարտիզակ Գ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ԾԵՐԱՄԱԲՈՒԾԱԿԱՆ

ՄԱՆՐԱԴԻՏԱԿ

ԵՒ

ԻՐ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

(Շար. Թիւ 65 էն)

—o—

Չի մոռնանք աւելցնելու թէ, աշխատանոցին մէկ բարձր տեղը՝ պէտք է ունենաք մաքուր ջուրի ընդունարան մը, որու յատակէն առնուած քառաշուէ խողովակ մը գործատեղանին եզերքը՝ ձեր մօտը հաստատուած ըլլալու է, ծայրը ծորակով մը։ Ցայտնի է թէ, այս ընդունարան ըսածնիս կրնայ չինուիլ պարզապէս թիթեղէ, և կամ ո և է յարմարագոյն ամանով մը։

Այս ընդունարանին ջուրը կը ծառայէ, իւրաքանչիւր քննութենէ վերջ, սանդը՝ որու մէջ քննութեան ենթարկելի շերտերը տրորուած էր, լուալ՝ մաքրելու։ Այս ընդունարանին տեղ կարելի է նաեւ՝ ո և է ամանով մը ջուրը պահել գործատեղանին մէկ յարմար տեղը, բայց նկատողութեան առնելիք կէտը հոն է որ, սանդերը այդ ամանին մէջ ընկղմելով պէտք չէ՝ լուալ, որովհետեւ՝ ինչպէս յայտնի է, ջուրը աղտոտելով, այլ ևս անկարելի կ'ըլլայ նպատակին ծառայել։ Բայց ընդունարանի դրութիւնը ա՛յն ատեն մանաւանդ օգտակար է, երբ շատ մը քննութիւններ մէկ օրուան մէջ իրարու ետեւէ կը կատարուին, ինչ որ սովորական է հնտաբոյծներու համար։

Բոլոր այս պիտոյքները, պէտք է «կատարեալ մաքրութեան» մէջ գտնուին՝ մանրացոյցի ոսպենիկէն սկսելով, մինչեւ յետին սրուակը, խողովակը, գործատեղանը նոյն իսկ, ևն։ Երբ տեսնէք որ, ոսպենիկները փոշոտած կամ ո և է կերպով մը աղտոտած են, անմիջապէս քակեցէք, և նախ Պէոոյի վրձինով մաքրեցէք, և հին՝ բայց մաքուր և չոր լաթի կտորով մ'ալ սրբեցէք։ Կտաւը՝ կամ գէթ բամպակեայ պաստառը աւելի կը յանձնարարուի այսպիսի գործողութեանց համար, քան տուին և կամ մորթեղէնները, որոնք աւելի կը ճարպոտեն ոսպենիկը՝ քան կը մաքրեն։ Եթէ ոսպենիկները ճարպոտած ըլլան, պէտք է վրձինը՝ կամ մաքուր լաթի կտոր մը ալքոլախառն ջուրի՝ կամ անուշադրախառն ջուրի մէջ թաթխելով մաքրել։ Այս հեղուկները պէտք է խիստ փոքր քանակով գործածել, որպէս զի՝ ալքոլը կամ անուշադրը՝ ոսպենիկներու յեռումները չաւրեն։ Ցետոյ պէտք է խնամով սրբել ոսպենիկները, և կրկին հեղուսելով (վիտալամաք) տեղաւորել։

Մանրադիտակին պղնձէ կամ արույրէ չինուած մասերը եթէ աղտոտած ըլլան, պէտք է սրբել հին կտաւի և կամ տուի՝ չուխի կտորով մը, մինչ ոդորկութեան գծերուն ուղղութեան հետեւելով։ Եթէ այդ պղինձները աղտոտած ըլլան ո և է ջնարակով, կամ ոչ-այսպէս հեղուկով մը, մաքրելու համար գործածեցէք կրկին, ալքոլի մէջ թաթխուած կտաւի կտոր մը, մինչ ալքոլը շատ քիչ գործածելով, որպէս զի իր ջնարակը չաւրուի։

Ապակեայ շերտերը և շերտակները՝ որոց համար ինչպէս ըսած ենք թէ մասնաւոր տուփի մը խորշերուն մէջ իրենց թանձրութեան համեմատ առանձին առանձին շարելու է, պէտք է լուալ ալքոլացեալ ջրով. եթէ քննութեան համար իրենց վրայ դրուած առարկաներէն շատ աղտոտած՝ ճարպոտած են, քիչ մը եթերով լուալու է. և եթէ երկարատեւ գործածութեամբ կրային բաղադրութիւններով դրուագուած ըլլան, այն ատեն պէտք է քիչ մը ջրաքլորական թթուտ պարունակող ջրով լուալ։

Շերտակները մաքրելու ատեն չի կտրտելու համար, պէտք է նուրբ կտաւի կտորով մը բթամատի և ցուցամատի մէջտեղ առնել, և փափկութեամբ աջ ու ձախ սահեցնելով չփել։ Ուշադրութիւն ընելու է որ, մասնաւորաբար ծայրերը իրարու համապատասխան գտնուին միշտ, որովհետեւ, եթէ մին միւսէն շատ առաջ անցնի, ապակին կը կտրի։

Շար. Ղ. ԲՈՂԱՏ

Արտօնատէր Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



Կ. ԵՍԱՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԹԷՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Զինական, Հնդկական և Ճարտնական ամենաընտիր տեսակէ եղող արտադրութիւնները պիտի դանէք ապահովաբար վերոյիշեալ պատուաւոր վաճառատան մէջ անհամեմատ աժանութեամբ։

Գաւառներու համար, յանձնարարութիւնները փութով և ճշդիւ կը կատարուին։

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, Ճէլալ Պէյ խանի տակ, Թիւ 10. սոյն վաճառատան ապրանքները ժողովուրդէն դընահատուած ըլլալով, շատեր անոնց կեղծը հրապարակ հանած են. ուստի զգուշանալու համար, վերոյիշեալ վաճառանիշին տակ Կ. Եսարուեան և Յ. Իսագուլեան ստորագրութիւնը փնտռեցէք։

ԴԱՂ. ՀԱՅ ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ՝ Հ. ՍԻՄԷՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կու տայ ընդհանուր գիտական, բժշկական, երկրագործական և այլ կարեւոր նիւթերու վրայ։

Կը յանձնարարուի, ո՛չ միայն այդ մասնաճիւղերով զբաղող անձանց, այլ մինչև իսկ, և ա՛լ աւելի դպրոցական տղայոց։ Գիտական բառերը, երբ իրենց քով պատշաճ մեկնութիւններ չունին, անթափանցելի և անհասկանալի կը մնան; և շատ անգամ ուսանողը երկբայութեան մէջ կը թողուն։ Վեր. Հ. Ս. Երամեանի այս նոր հրատարակուող բառգիրքը՝ ո՛չ միայն այդ բառերու հակիրճ մեկնութիւնները կու տայ, այլ և անոնց կարեւորագոյն մասին՝ խնամով պատրաստուած պատկերներն ալ դրած է. ուստի՝ փութացէք առիթէն օգտուիլ, քանի որ տակաւին բաժանորդագրութիւնը աժան է, և ամէն քսակի համար ալ դիւրամատչելի։

Մինչեւ տպագրութեան աւարտիլը՝ բաժանորդագրութիւնը 10 ֆրանք է. թղթատարութեան ծախքով 12.50 ֆր.։ Յաւարտ տպագրութեան, գինը կը բարձրանայ 15 ֆրանքի։

Խմբագրութիւնս կ'ստանձնէ կանխիկ վճարուած յանձնարարութիւնները։

,,ԱԴԱՄ''

«ԴԱՂԻՆՏԻՐԵԱՆ ՆՈՐԱԳԾԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ» անուանով սոյն գործը վերջապէս սկըսաւ հրատարակուիլ, որ կ'ուսուցանէ արանց և մանչ տղոց ամէն տեսակ հագուստներ, ինչպէս նաեւ ՕՍՄԱՆԵԱՆ զինուորական ու քաղաքային համազգեստներ ՁԵՒԵԼՈՒ և ԿԱՐելու եղանակը, բոլորովին նորագոյն և իսկապէս դիւրընթռնելի մեթոտով մը։

Գնողներուն դիւրամատչելի ըլլալու համար՝ ընդհանուր գործը բաժնուած է 3 հատորներու։ Ա. հատորը կը պարունակէ բոլոր «Դալեոյով» հագուստները, իրենց ամբողջ մանրամասնութեամբը։ Գործն ընտիր թղթի վրայ, գեղատիպ 200 մեծադիր էջէ և 48 վիմատիպ տախտակներէ կը բաղկանայ, 250է աւելի արտայայտիչ օրինակներով ու պատկերներով։ Իր գերազանց առաւելութիւնն այն է որ՝ ՁԱՓԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ եօթ, ինն կամ տասնեւմէկ չափով ձեւել կ'ուսուցանէ ամէն կազմուածքի վրայ։ Ա՛լ աւելի մատչելի ըլլալու նպատակաւ, Ա. հատորին բաժանորդագրութիւնը բացուած է միայն 3 ամսուան համար կէս օսմ. ոսկի՝ կանխիկ, թղթատարի ծախքով 60 դահեկան։

Դիմել Մ. Գալէնտէր, Թարագճըլար փողոց, Թիւ 49, Կ. Պոլիս։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հանրագիտակ կը հրատարակուի առ այժմ շաբաթը անգամ մը. իր նպատակն է գիտութիւնները ռամկացնել, եւրոպական արհեստներու, արուեստներու, ճարտարարուեստներու, երկրագործութեան ևն. դրութիւններն ու նորութիւնները ծանօթացնել գործնական բացատրութիւններով։

Հանրագիտակ՝ իր յառաջդիմութիւնը ժողովուրդին յառաջդիմութեան մէջ, իր իսկական շահը՝ հանրութեան մէջ փնտռել՝ իրեն միակ նպատակ ըրած ըլլալուն, հաստատած է հարց-պատասխանիի դրութիւն մը, որու օգտակարութիւնը փորձով հաստատած են մեր յարգոյ բաժանորդները։

Հանրագիտակ կը պատասխանէ գլխաւորաբար այն ամէն օգտակար հարցումներու, որոնք կը վերաբերին երկրագործութեան, Անասնաբուծութեան, Արհեստագիտութեան, Ճարտարարուեստի, Առտնին տնտեսութեան և իրենց յարակից ճիւղերուն։

Եթէ տրուելիք պատասխանները թերթիս պարունակութեանց մաս [illegible] որոցմէ հանրութիւնը և երկիրը [illegible] օգտուիլ, խմբագրութիւնս ո և է փոխարինութիւն չի պահանջեր։

Ուղղուած հարցումներու մէջ [illegible] մենէն առաջ կը պատասխանուի [illegible], որ հանրային շահուն հետ անմիջական կապակցութիւն ունի. մնացեալներուն կը պատասխանուի յարմարագոյն առթիւ։

Կը պատասխանուի մի միայն այն հարցումներուն, որոնք կ'ուղղուին Հանրագիտակի Պատ. բաժանորդներու կողմէ։

Տրուած պատասխանները շահեկան և օգտակար կերպով ներկայացնելու համար, ուղղուած հարցումներու կորեւորներուն մանրամասն և գործնական բացատրութիւններ կը տրուին, որ կրնայ երբեմն յապաղում պատճառել, բայց վերջապէս ուշ կամ կանուխ կը պատասխանուի։ Այս պատճառաւ պէտք չէ մենք անմիջական պատասխան խնդրել։

Անոնք որ իրենց զբաղումին վերաբերեալ ո և է հարցում կ'ուղղեն խմբագրութեանս, և կ'ուզեն պատասխանը միայն իրենց վերապահել, պէտք է մասնաւոր սակարկութեամբ, և հարցումի կարեւորութեան համեմատ վճարում մ'ընեն։

Եթէ պատահի հարցում մը, որ թերթիս ծրագրէն դուրս ըլլայ, և պատասխանը ստանալու համար մասնագէտներու կարծիքին պէտքն զգացուի, ծախքը՝ և այդ մասնագէտներու պահանջած փոխարինութիւնը պէտք է ընէ՝ հարցատէրը։

Հանրագիտակ կ'ընդունի այն ամէն անձանց աշխատակցութիւնը, որոնք թերթիս ուղղութեան համաձայն հանրօգուտ յօդուածներ կը ղրկեն։

Իր աշխատակիցներուն կը նուիրէ առ այժմ թերթ մը։ Թերթին յառաջդիմութեան հետ մտադիր է նաեւ դրամական փոխարինութիւն ընել ապագային։

Հանրագիտակ իր բաժանորդներու կողմէ եղած յանձնարարութիւնները կը կատարէ, եթէ փոխարժէքը կանխաւ յանձնարարութեան հետ ղրկուի։

Հանրագիտակ կ'ընդունի ամէն տեսակ ծանուցումներ և աղդարարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով։

Հեղինակներ և հրատարակիչներ, որք կ'ուզեն արժանապէս գրադատուիլ կամ գնահատուիլ, պարտին 3 ական օրինակ ղրկել խմբագրութեանս իրենց գործերէն։